

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԵԼ
ԿՈԼԽՈԶԻ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ



338

Գ-36

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ,
ՄՈՍԿՎԱ

1930

338

Գ-36

15 JAN 2010

Ն. ԳԱՐԿԵՅ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԵԼ
Կ Ո Լ Խ Ո Զ Ի
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ - ՊԼԱՆԸ

ԽՍՀՄ ԺՈՂ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ



74 MAR 2013



49314 km



473453

«Գյուղացիին առաջ պլան չունենր. իր աշխատանքը նա մեծ մասամբ ըստ սովորութեան, կամ նույնիսկ բնազդով եր կատարում, ինչպես չվող թռչուն. հասնում ե գարունը—այս ինչ տոնից հետո գյուղացին սկսում ե ցանել, դալիս ե ամառը և դարերի ընթացքում վորոշված որը նա սկսում ե հնձել»

Այժմ բոլորովին այլ բան ե. կոլխոզում սովորութեան և բնազդի վրա հույս չեն դնում: Այժմ իրենց արդֆինպլանները քննելիս, գյուղացիները կյանքի և մահվան հարց են վճռում, վորովհետև այդ պլանների իրագործումից ե կախված, թե վորքան հաց են հավաքելու և վորքան միս են պատրաստելու նրանք, ինչպէս են ապրելու մյուս տարի, թե արդյոք ապահովելո՞ւ չեն իրենց վառելիքով, միջոցներ գտնելո՞ւ չեն թե վո՞չ հազուադէպ, կոշիկների համար և այլն:

Գլխավորն ե—կարենալ կարգի գցել կ ո լ խ ո զ ն եր ի ար տ ա գ ը ու թ չ ու նը»:

Կալինին

I ՊԵՏՔ Ե ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄՏՑՆԵԼ ԿՈԼԽՈՉՆԵՐՈՒՄ

Խոշոր կոլեկտիվ տնտեսութեան ուժը կայանում է նրանում, վոր նա հնարավորութիւնն է տալիս ամենալիակատար կերպով ոգտագործել բանվոր ուժը, մարդկային աշխատանքն ամենաընդարձակ չափով փոխարինելու մեքենայով. տնտեսավարութեան մեջ գիտական ձեեր լայն գործադրելու, առատ բերք ստանալու, առավել ապրանքաշնութեան ու արդշունավետութեան հասնելու:

Այդպես, որինակ, մի շարք ամենալավ կոլխոգներում ցորենի բերքը չորս անգամ, իսկ հաճաքինը յերկու անգամ ավելի բարձր է, քան անհատական տնտեսութիւններում: Կոլխոգում յուրաքանչյուր աշխատավորին հասնող ընդհանուր յեկամուտը մեկ ու կես, յերկու անգամ ավելի շատ է, քան անհատական տնտեսութիւններում: Դա բացատրվում է գլխավորապես նրանով, վոր կոլխոգները լավ կազմած արտադրական պլաններ և ամբողջ աշխատանքի պլանավոր կազմակերպութիւնն ունեն:

Քանի վոր այս բոպեյին կոլխոգներն և սովխոգները մեր գյուղատնտեսութեան հիմնական մասն են կազմում, ուստի և գլխավորապես նրանց վրայ է ընկնում մեր յերկրի արդշունաբերութեան և նույն ինքն գյուղատնտեսութեան աճող և բազմացող պահանջներից բղխող յերեք կարևորագուշն խնդիրների լուծումը:

Առաջին խնդիրն է կոլխոգների բերրիութիւնն և արդշունավետութիւնը ամեն կերպ բարձրացնելը, յերկրի կարիքը սննդեղենի վերաբերմամբ (հաց, միս, յուղ, կաթ և այլն) լիովին ապահովելու համար:

Յերկրորդ չափազանց կարևոր խնդիրը արդշունաբերութիւնը հում նշութեղենով (բամբակ, կտավատ, ճակնդեղ, բուրդ, կաշի և այլն) ամենամեծ չափով ապահովելու խնդիրն է:

Յեւ, վերջապես, յերրորդ չափազանց լուրջ խնդիրն է՝ գյուղատնտեսական բերքերի ավելցուկի արտասահման ուղարկելու գործն ապահովել:

Յուրաքանչյուր կոլխոգ ամեն կերպ մասնակցելով հանդերձ այդ յերեք հիմնական խնդիրների իրականացման պետք է հիշի, վոր դրանով նա ոգնում է ինքն իրեն: Կոլխոգների ապահովումը գյուղատնտեսական մեքենաներով, տրակտորներ-

րով, պարարտացման նյութերով և այլն (թե մեր արդյունաբերութեան և թե արտասահմանից գյուղատնտեսական բերքերի փոխանակման միջոցով ներմուծված պրոդուկցիայի հաշվին) սերտ կերպով կապված է իրենց, կոլխոզների աշխատանքի այդ չեղձ հիմնական խնդիրների իրականացման հետ:

Կոլխոզների ընդլայնումը և ամրացումը, նրանց բարձր բերրիութեան և տնտեսութեան արդյունավետութեան հասնելը, ամբողջովին կախված է նրանից, թե վորչափով կոլխոզների անդամները կողտագործեն իրենց ունեցած բոլոր հնարավորութիւններն այդ հարցում, վորչափ կանոնավոր կկարողանան կազմակերպել տնտեսութիւնը, այսինքն ամենասակավ ուժ և միջոցներ գործադրելով ամենաշատ արդյունք ստանալ:

Կոլխոզի տնտեսութիւնը կանոնավոր կազմակերպել կարելի չէ միայն այն դեպքերում, չեթե նա կազմված է վորոշ պլանով: Առանց պլանի աշխատել,—այդ նշանակում է կոլխոզը կորստի ուղիով տանել, վորովհետեւ բարեկարգել տնտեսութիւնը, կազմակերպել նրա մեջ աշխատանքը, ապահովել խնդիրների իրականացումը—առանց պլանի անհնարին է: Իրոք, այս բոլորին ԽՍՀՄ կոլխոզներում ցանքսադաշտի միջին չափը հավասար է 800 հեկտարի, իսկ կոլխոզների մեջ

միավորված տնտեսութիւնների միջին թիվն հավասար է 130 ծխի: Այդպիսով կոլխոզի մեջ մոտավորապէս միջին թվով 500—600 մարդ կա, վորոնցից 300—350-ը աշխատանքի ընդունակ է: Կարելի՞ չէ արդյոք առանց պլանի կանոնավոր կազմակերպել այդ 300 աշխատավորների աշխատանքը, գիտենալ թե վորին ուր, չեքք և վորքան ժամանակով աշխատանքի ուղարկեն, ամենաձեռնտու կերպով մշակել 800 հեկտար հողը:

Կյանքն ակներև կերպով հաստատեց, վոր անհնարին է: Կոլխոզների մի մասը վոչնչացան կամ վորորմեկի դրութեան մեջ են գտնվում միմիայն շնորհիվ այն հանգամանքի, վոր աշխատում են առանց պլանի, խարխափով, վորեւե կերպ. փոխանակ վորեւե հիմնավոր մասնաճյուղի վրա կենտրոնանալու, մի շարք մասնաճյուղեր ելին ստեղծում առանց հաշվի առնելու հնարավորութիւնները և տնտեսական նպատակահարմարութիւնները: Դրա հետեանքն է ֆլասներ և նուշխիսկ կոլխոզների մի մասի լիակատար քայքայումը:

Այս բոլորին, կոլխոզների զգալի մեծամասնութեան գոյութեան առաջին տարվա պայմաններում, հարկավոր է տնտեսութեան կազմակերպման հարցերում հատուկ պարզութիւն, կոլխոզների ուշադրութեան շեշտումը պլանի վերաբեր-

մամբ: Նոր տասնյակ հազար կոլխոզներ, վոր ներծուլվել են մեր գյուղի սոցիալիստական հատվածում, հարկավոր ե կազմակերպչորեն ամրապնդել: Կոլխոզնիկների միլիոնավոր մասսաներում պետք ե ձգտել կոլեկտիվ աշխատանքի սովորույթներ ձեռք բերել իրենց ծանոթ տնտեսության մասնաճյուղերի հիման վրա, վորոնց առաջ ներկա տնտեսական տարում մեծ խնդիրներ կան կանգնած: Դրանց թվումն ե ցանքսի տարածության ընդարձակումը, բերրիության ու ապրանքայնության բարձրացումը, անասունների թվի բազմացումը և այլն:

Սխալ կլինի հենց այս բոլորին համարձակ պլաններ կազմել տնտեսության ուղղության հիմնական վերակազմակերպման վերաբերյալ, հենց այժմ տարվել կոլխոզները նեղ մասնաճյուղերի վերածելու հարցով: Շտապելով և տաքանալով շատ բան կարելի չե փչացնել, թեկուզ հենց ամենաբարի նպատակներ ունենային այդ տեսակ շտապ վերակազմակերպիչները:

Արտակարգ նշանակութուն ե ձեռք բերում այդ հարցը ազգային ուսյոններում, մանավանդ թյուրքական, ուզբոֆին, անդրկովկասյան և ուրիշ ազգությունների ուսյոններում: Կոլեկտիվացման տեմպը նրանց մեջ (չեթե հաշվի չառնենք թաթարական, Բաշկիրների և Դրիմի հանրապետու-

թյունները) չետ ե մնում Միության տնտեսության կոլեկտիվացման ընդհանուր տեմպից: Այդպես, որինակ, այս տարվա մինչև մարտի 1-ը կոլեկտիվացման մեջ ընդգրկված առանձին ազգային հանրապետությունների տնտեսությունների թիվը հետևյալն ե—

Կարելիայի ավտ.	ԽՍՀ	ընդգրկած ե	7,5	տոկոս
Տաճիկստանի	ԽՍՀ	»	11,1	»
Թուրքմենիայի	ԽՍՀ	»	16,0	»
Դաղստանի ավտ.	ԽՍՀ	»	17,8	»
Կիլգիզիայի	»	ԽՍՀ	»	19,0
Անդրկովկասյան	ԽՍՀ	»	20,9	»
Ուզբեկստանի	ԽՍՀ	»	27,9	»
Կազակստանի ավտ.	ԽՍՀ	»	37,1	»

Ազգային այն ուսյոններում, ուր ազդաբնակության կուլտուրական մակարդակը չափազանց ստոր ե, ուր մինչև այժմ պահպանվել են ֆեոդալական և կիսաֆեոդալական մնացորդներ, ուր կենցաղային, կրոնական և ուրիշ առանձնահատկություններ տակավին սակավ տեղ չեն բռնում և ուր շնորհիվ այդ բոլորի մենք ակնառես ենք դասակարգային կովի առանձնակի ուժեղացման—պլանային աշխատանքի ապահովման հարցը բոլորովին բացառիկ նշանակութուն ե ձեռք բերում այն կոլխոզների մեջ, վորոնք համարյա բացառապես անցյալ ձմեռվա ընթացքում են կազմակերպված:

Վորպիսի վիթխարի հեղաշրջում պետք է կատարել թեկուզ հենց տնտեսությունը վարելու սխտեմի արմատական փոփոխության վերաբերմամբ: Չե՞ վոր շատ ազգային ռազոններում դեռ մինչև այժմ տիրում են հողամշակության և անտառաբուծության նահապետական ձևեր: Ինչ վիթխարի միջոցներ պետք է ձեռնարկել անասնաբուծական կոլխոզներ կազմակերպելու մի շարք ազգային ռազոններում, քանի վոր այնտեղ մինչև այժմ գոյություն ունի դրերով հաստատված անասնաբուծական նախնական քոչվորական (չալա) սխտեմ: Ինչ վիթխարի խնդիրներ են ծագում այդ ռազոնների հողորգանների, կոլխոզային միությունների, խորհրդային և կուսակցական կազմակերպությունների առաջ, վորպեսզի գյուղական տնտեսությունը վարել գեթ միայն ժամանակակից պարզ ու կիսաբարդ գյուղատնտեսական մեքենաներով, ել չենք ասում տրակտորներով և բարդ մեքենաներով: Չե՞ վոր դեռ մինչև այժմ այդ ռազոններում գերիշխում են փայտե չութն ու տափանը և այլն:

Զնայած շատ ազգային ռազոնների գյուղական տնտեսության կիսանախնական բնույթին, չնայած վոր այնտեղ չորաքանչյուր անհատական տնտեսություն աշխատում է արտադրության չափազանց հնացած գործիքներով, նա այնուամեն-

չաֆնիվ աշխատում է իր ձեռի մի տեսակ պլանով: Ծիշտ է, այդ պլանը չափազանց նախնական է, մանրամասնորեն մտածված չէ, գրի չէ անցրած, սակայն անհատական մանր տնտեսավարություն մեջ ըստ ելություն դրա կարիքը չեր ել զգացվում, վորովհետև ամբողջ պլանը տնտեսատերի գլխումն էր գտնվում: Չափազանց նախնական ուղիով, վոր ժառանգել էր պապերից և նախապապերից, անհատական տնտեսության տեր չորաքանչյուր գյուղացին գիտեր, վոր նա պետք է ցանի այսինչը և այսինչ ժամանակ, իր հողի այսինչ մասերում, այսինչ որը կգնա հավաքելու, աշխատանքը պետք է ավարտի այսինչ որը և այլն:

Կոլխոզային պայմաններում չեթե նա միավորում է մի քանի հարչուր և հուշնիսկ հազար ծխի և միջին թվով մոտ հազար հեկտար հող, հուշս դնել վոր հնարավոր կլինի խոշոր տնտեսությունը վարել և լավ հետևանքներ ստանալ նախապապերի հաստատած կանոնների և սովորությունների հիման վրա, նշանակում է կամ անուղղելի ապուշ լինել կամ կոլխոզային շինարարություն գիտակից թշնամի լինել:

Խորհրդային պայմաններում արտադրական պլանը, լինի դա ֆաբրիկա, սովխոզ կամ կոլխոզ, ել չենք խոսում ժողովրդական տնտեսություն, կուլտուրայի ու կենցաղի ուրիշ ճյուղերի

պլանաչնության մասին, հանդիսանում է հիմնական տնտեսական սոնակ: Առանց պլանի կանոնավոր կազմակերպել վորևե ֆաբրիկի, ուսումնարանի, վորևե ձեռնարկության կամ հիմնարկության, վորևե կոոպերատիվի, գյուղխորհրդի կամ շրջգործկոմի, և մանավանդ կոլխոզի արտադրությունը անհնարին է:

II ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՈՎ

Կոլեկտիվ տնտեսությունը, ինչպես ասացինք պետք է վարել լավ մշակված և մտածված պլանով, պետք է ունենալ կոլեկտիվ տնտեսության զարգացման չերկու պլան.— ա ռ տ ա դ ր ա կ ա ն — (տարեկան) և կ ա զ մ ա կ եր պ չ ա կ ա ն — մի քանի տարվա համար, վորպեսզի իմանան, թե վճիռ կողմն է զարգանալու տնտեսությունը, թե ինչ ուղղություն է ընտրում կոլխոզը (հացահատիկային, կաթի և այլն): Պլանը հարկավոր է նրա համար, վորպեսզի վաղորոք իմանան, թե ռւր և չէրբ պետք է միջոցներ և աշխատանք գործադրել և թե ինչ հետևանքներ կարելի չե դրանից սպասել: Պլանը հարկավոր է, վորպեսզի ավելի լավ ոգտագործել գույքը, մեքենաները, ներդրելիք միջոցները:

Պլան անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի ավելի լավ կարգավորեն տնտեսությունը, վորպեսզի սակավ ուժ և միջոցներ գործադրելով առավել արդյունք ստանան:

Պլան կազմելը հեշտ չէ: Պլան կազմելու համար անհրաժեշտ է հրավիրել գլուղատնտեսության մասնագետ անձնավորություն — ագրոնոմ: Կոլխոզի անդամները պլան կազմելու մեջ պետք է ամենազործունյա մասնակցություն ունենան:

Կազմած պլանի հաջող իրականացումը մեծ մասամբ կախված է այն հանգամանքից, թե կոլխոզի յուրաքանչյուր անդամը վճիռ աստիճան համոզված է պլանում նիշած ձեռնարկությունների անհրաժեշտություն մեջ:

Արտադրական պլանը մշակելուց հետո նա պետք է քննարկվի արտադրական խորհրդի նիստում և հաստատվի կոլխոզի անդամների ընդհանուր ժողովում: Դրանից հետո պլանը համաձայնեցվում է կոլխոզային միություն հետ և հողորդանների հետ:

Պլան կազմելիս գործած ամեն մի սխալ անպայման չերևան կգա վերջը, կպահանջի աշխատանքի ընթացքում փոփոխություն, կպատճառի ավելորդ ծախս և այլն, իսկ խոշոր սխալները և խոտորումները կարող են կոլխոզը կորստի մատնել: Ուստի և պլան կազմելուց առաջ պետք է խնամքով հաշվի առնել և կշռել այն բոլոր պայմաններն, ուժերը, միջոցները և հնարավորությունները, վոր ունի տվյալ կոլխոզը:

Ամենից առաջ պետք է հաշվի առնել շրջանի բնական պայմանները: Պետք է ծանոթ լինել տնտեսության հողի հետ, թե ինչ կուտուրաներ են բնում, թե տարբեր կուտուրաներից ինչքան բերք է ստացվում: Պլանում պետք է նաև հաշվի առնել և արտահայտել կլիմայական պայմանները (տարվա տեմպերատուրան, տոթի և խոնավության քանակությունը, սառնամանիքների վերջնալը գարունքին և սկսվելը աշունքին և այլն): Կոլխոզը պետք է աճեցնի և մշակի այնպիսի կուտուրաներ, վորոնք տվյալ կլիմայական պայմաններում և հողում ամենամեծ բերք են տալիս: Բացի դրանից պետք է ինկատի ունենալ կլիմայի ազդեցությունը (թեև սակավ աստիճանի) անասունների բազմացման համար: Որինակ, վոչխարները տոթ չեն սիրում և պահանջում են ընդարձակ արոտատեղեր: Մեղմ ձմեռներն, ընդհակառակը, նպաստում են վոչխարաբուծության:

Չափազանց կարևոր է իմանալ նաև, թե տվյալ շրջանում բույսերի ինչ վնասատուներ կան տարածված, այլ կերպ՝ տնտեսությանը անակընկալ կերպով մեծ վնասներ կարող են հասնել:

Բացի շրջանի բնական պայմանների հաշվառելից անհրաժեշտ է հաշվի առնել նաև տնտեսական պայմանները — կոլխոզի հեռավորությունը շուկայից, ճանապարհները, զանազան բերքերի

գները և այլն: Յեթե կոլխոզը քաղաքից, ֆար-
րիկից կամ գործարանից հեռու չե, ապա նրա
համար դժվար չե վաճառել կաթը, բանջարեղենը,
միրգը, ձուն և այլն: Այդ տեսակ տնտեսության
մեջ շահավետ ե աճեցնել ալգու և բանջարանոցի
կուլտուրաներ, կաթնալին անասնաբուծություն
և հավաբուծություն:

Իսկ ընդհակառակն, չեթե կոլխոզը շուկանե-
րից հեռու չե, այդ դեպքում տնտեսության
ուղղությունը պետք ե փոխվի և կաթնատնտե-
սությունը, որինակի համար, պետք ե մտածի
կաթը յուղի փոխելու մասին: Կան նաև մի
շարք շրջաններ, ուր ավելի ձեռնտու չե հա-
ցահատիկներ, բամբակ, կտավատ և կամ մսացու
անասուններ զարգացնելը: Այս բոլոր մոմենտ-
ները պետք ե խիստ խնամքով խորհել և կշռել
նախքան կոլխոզի արտադրական պլանը կազ-
մելը և տնտեսության ուղղությունն և մաս-
նաճյուղը նիշելը: Կոլխոզի գտնված շրջանի բնա-
կան և տնտեսական պայմաններն ուսումնասիրե-
լուց և հաշվառքից հետո, անհրաժեշտ ե վորոշել
թե գյուղական տնտեսության ինչ ճյուղերով և
ինչ չափով ե նա զբաղվելու: Տնտեսության վոր
ուղղությունն ե, հողագործության և ցանքսա-
փոխության վոր սխառնմն ե ավելի շահավետ
տվյալ կոլխոզի կոնկրետ պայմաններում: Դրա

հետ միասին պետք ե նախատեսել, թե վորպիսի
տնտեսական շենքեր և գույք, հում նյութերի վե-
րամշակման համար ձեռնարկություններ պետք ե
կառուցվեն կոլխոզներում:

Յյուրաքանչյուր կոլխոզ պետք ե
ընտրի տնտեսություն վորոշ մասնա-
ճյուղ, վոր և կլինի նրա հիմնական արտա-
դրությունը. որինակ, հացահատիկային, անաս-
նաբուծական, բամբակագործության, կտավա-
բուծության մասնաճյուղը և այլն: Յեթե կոլ-
խոզը իր հիմնական մասնաճյուղ ե ընտրել հա-
ցահատիկայինը, ապա մյուս բոլոր մասնաճյու-
ղերը հացահատիկային կոլխոզի համար լինելու
չեն լուր ոժանդակ: Ոժանդակ մասնաճյուղերը
կոլխոզի մեջ տարվում են՝ ավելորդ բանվոր ուժը
ոգտագործելու նպատակով:

Մենք արդեն ասացինք վերևը, թե ինչ կորս-
տաբեր հետևանքներ կարող ե ունենալ նոր կազ-
մակերպվող կոլխոզների համար ամեն ինչ միան-
գամից ստեղծելու ձգտումը, — թե հացահատիկա-
յին արտադրություն, թե անասնաբուծություն,
թե հավաբուծություն և այլն: Տնտեսության հիմ-
նական ուղղություն ընտրելու հարցին պետք ե
շատ լուրջ մոտենալ: Համենայն դեպս առաջին
տարին, քանի կոլխոզը չի ամրապնդվել, ամենից
լավն ե պահպանել տնտեսության այն ուղղու-



թյունը, վոր տվյալ շրջանում կամ գյուղում գործադրվում եր նախքան կոլեկտիվացումը: Սակայն այդ դեպքում հիմնական ուղադրություն պետք է դարձնել բերրիության բարձրացման վրա, ցանքսի լախացման, ապրանքայնության, աշխատանքի արտադրողականության մեծացման վրա և հողի մշակման լավագույն ձևերի գործադրման և ագրո-տեխնիկական մի շարք ուրիշ կատարելագործումների վրա:

Ամենից առաջ քննենք տնտեսության տիպերը:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ

Ըստ հիմնական ապրանքային պրոդուկցիայի բնույթի, վոր արտադրվում է և վորից ստացվում է գլխավոր չեկամուտը, կոլխոզների տնտեսությունները կարելի չե բաժանել հետևյալ տիպերի (տեսակների):

1. Տնտեսության հացահատիկային տիպ—հիմնական պրոդուկցիան կազմում են հացահատիկային կուլտուրաները—հաց, սիմինդր, լոբի, չուղաբեր բույսեր և այլն: Տնտեսության հիմնական մասնաճյուղն է հողագործությունը:

2. Տնտեսության անասնաբուծական տիպ—հիմնական պրոդուկտն է անասնաբուծության պրոդուկտները—կաթ, միս, ճարպ, ձու, բուրդ և այլն: Տնտեսական հիմնական մասնա-

ճյուղ կարող են լինել—կաթնատու կամ մսացու խոշոր չեղջյուրավոր անասուններ, վոչխարաբուծություն, խոզաբուծություն, ձիաբուծություն, չեղջյուրաբուծություն, հավաբուծություն, ճագարաբուծություն և այլն:

3. Տնտեսության արդյունաբերական տիպ—հիմնական արդյունքն է արդյունաբերական վերամշակման պրոդուկտները (յուղ, պանիր, շաքար, սպիրտ և այլն):

Ազգային շրջանների և յերկրի ծայրամասերի գյուղական տնտեսության ներկա պայմաններում, կոլեկտիվացման պրոցեսը գլխավորապես ընթանալու չե յերկու ուղղությամբ—հողագործական մասնաճյուղի կազմակերպության գծով և ոժանդակ մասնաճյուղերով (անասնաբուծության) և անասնաբուծական-հողագործական կոլխոզների գծով, անասնաբուծության նշանակության գերակշռությամբ, վորի շահերին չենթարկվելու չեն մյուս բոլոր մասնաճյուղերը:

ԿՈԼԽՈԶԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՆ (ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

Տնտեսությունը ուղիղ վարելու համար, դաշտից պրոդուկտներ տեղափոխելու, յերթեկուծության համար, զուր ժամանակ և ուժ չվատնելու համար, հեռավոր տափամասերը գոմաղբով ծածկելու համար և այլն, չուրաքանչյուր կոլխոզ

ամենից առաջ պետք է վճռի ամենաուղիղ հողաշինարարութեան հարցը:

Հողահատութեան ցանուցիւ լինելը, հարեան չերկրագործների աչն հողամասերը, վոր մտած են կոլխոզային հողամասերի միջև, պետք է վերացնել.

Պետք է ձգտել, վորպեսզի—

ա) կոլխոզի ամբողջ հողը մի լրիւ տարածութիւն ըննի և նրա մեջ ուրիշի հողամասեր չմտնեն.

բ) կոլխոզի հողերը ուրիշների հողերում (և ուրիշների հողերը կոլխոզի հողերում) սեպւած չլինեն:

գ) կոլխոզի հողը կոլխոզի ագարակի շուրջը լինի:

Ամենից հարմար է, վոր ագարակը կոլխոզի հողերի կենտրոնում գտնվի: Դրա համար պետք է աշխատել, վոր կոլխոզի հողահատութիւնը քառակուսի ստացվի: Դրա շնորհիւ մեծ խնայողութիւն է ստացվում ապրանքները տեղափոխելիս և տեղափոխութիւններ կատարելիս: Յանք-սափութեան առանձին դաշտերը պետք է նմանապես քառակուսի լինեն: Դաշտային աշխատանքներ կատարելու համար ամենից լավ է չերկար ուղղանկյուն հողահատութեան կտրել: Դրա շնորհիւ աշխատանքի մեծ խնայողութիւն է ստացվում:

Հողաշինարարութիւնը պետք է իրագործել՝
ա) հողոգտագործութեան իրավաբանական ձևավորման միջոցով, վորոշելով թե կոլխոզը ինչ հողահատութեան կտրով պետք է ոգտվի, և այդ հողահատութեան սահմանները հաստատելով.

բ) չերեան հանել գյուղատնտեսական հողաբաժինները և նրանց սահմանները: Ամբողջ հողը բաժանվում է կատեգորիաների, անշատվում են և չափավորվում գյուղատնտեսական հողերը—անտառ, մարգագետիններ, արոտատեղեր, վարելահողեր, անհարմար հողեր և և այլն: Վարելահողը բաժանվում է կարգերի ըստ իրենց պտղաբերութեան: Ամեն մի հողահատութեան պետք է ոգտագործել ամենամեծ արտադրողականութեամբ, վորպեսզի ամենաբարձր չեկամուտ ստացվի:

գ) տնտեսական բարեկարգութեան միջոցով, կատարվում է ցանքսափոխութեան դաշտեր հատվածելով, ուղիներ հաստատելով և այլն: Տնտեսական բարեկարգութեան ամենահարմար ձևն է կոլխոզի մեջ ամբողջ հողահատութեան բաժանումը ուղիղ գծերով, վորոնք իրար կտրում են ուղիղ անկյունով և քառակուսի հատվածներ կազմում 10—100 հեկտար տարածութեամբ:

Կոլխոզի տերիտորիան կարգի բերելիս բացառիկ նշանակութիւն ունի ճանապարհների շինա-

ընթացումը: Ճանապարհները այնպես պետք է շինել, վոր ապահովվի անընդհատ հաղորդակցություն տնտեսության մասերի հետ ամբողջ տարվա ընթացքում: Ճանապարհների համար պետք է ինչքան կարելի չե քիչ հող զբաղեցնել, գոյություն ունեցող ուղիները այդ պահանջներին միշտ չեն գոհացնում: Ուստի և հողաշինարարության ժամանակ ամենից առաջ պետք է ներշնչել գլխավոր ուղիները, վորոնք կոլխոզը կապում են չերկաթուղու կայարանի, նավահանգստի և կամ շրջանային կենտրոնի հետ, նաև հիմնական դաշտային ուղիները, վորոք դաշտը կապում են կոլխոզի տնտեսության հետ:

Վոչ պակաս նշանակություն ունի կոլխոզի նաև տնտեսական ագարակի հարցը: Սկզբում գյուղացի կոլխոզնիկների պատրաստ տնտեսական շինութուններն ոգտագործելու նպատակով նա կապված կլինի գլխավոր բնակատեղիին: Անուամենայնիվ կոլխոզի գոյության հենց առաջին տարիները անշուշտ անհրաժեշտ կլինի շատ տնտեսական շենքեր կառուցել: Այդ շենքերը պետք է գոհացնեն տնտեսության բոլոր պահանջները, ուստի և նրանք պետք է կառուցվեն այնպիսի տեղերում, վորպեսզի համապատասխանեն խոշոր կոլեկտիվ արտադրությանը հարմարեցրած նոր ագարակի կազմակերպման պլանին: Ամենից առաջ պետք է ընտրել

ագարակի տեղը, հնարավոր չեղածի չափ կոլխոզի հողային հրապարակի կենտրոնում, չոր տեղ, բայց այնպիսի տեղ, ուր լավ ջուր կա և այնտեղից հեշտ կարելի չե կապակցվել տնտեսության առանձին մասերի հետ: Պետք է աշխատել, վոր շինությունները եժան նստեն և արդյունավետ լինեն, ուստի և պետք է գյուղացիական շինությունները լիովին ոգտագործել, նրանց հարմարեցնելով կոլխոզի պայմաններին և կարիքներին (անասունների համար ցրտից ապահով բնակատեղի շինել, մեքենաներ և ինվենտար պահելու համար շինություններ պատրաստել, բանող ձիերը խմբելով 10—15 ձի տեղավորող ախոռներ և այլն): Առանձին դեպքերում կարիք կլինի հին շինությունները քանդել, իսկ նյութերը գործադրել նորերի համար, վորոնց չափերը պետք է համապատասխանեն կոլխոզի պահանջներին, անասուններին, մեքենաներին և այլն: Շինարարությունը կարելի չե եժանացնել տեղական շինարարական նյութեր գործադրելով (կավ, հարդ, քար և այլն), սեփական միջոցներով աղյուս պատրաստելով, պարզ և եժանազին շինություններ կառուցելով: Բոլոր շինարարական աշխատանքները կարելի է չեղած չափով պետք է կատարել կոլխոզի անդամներով՝ մասնագետների ղեկավարությամբ: Պետք է աշխատել, վոր կերի շտեմարանը անասունների

ախոռից մոտ լինի, նաև աղբանոցը գոմի, ախոռի մոտ լինի՝ դա կհեշտացնի աղբի հավաքումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԸ ՅԵՎ ՔԱՐԾՈՂ ՈՒԺԸ

Ամբողջ գյուղատնտեսական ինվենտարը բաժանվում է յերկու մասի—քարշող ուժը և բանող մեքենաները:

Քարշող ուժը գյուղատնտեսության մեջ կարող են լինեն յերկու տեսակի—լծկանները (ձի, յեղ, ուղտ, ջորի) և մեքենական քարշող ուժ (տրակտոր, լոկոմոբիլ, ավտոմոբիլ):

Բանող մեքենաները բաժանվում են հետևյալ խմբերի—

- ա) հողը մշակողներ.—
- բ) ցանոց և բույսեր խնամողներ.—
- գ) հուն ձը հավաքողներ.—
- դ) հատուկ ինվենտար.— (գոմի համար, միթերքները մշակելու համար, սերմադրիչներ, ալցու, բանջարանոցի համար, մեղվաբուծության համար և այլն):

Տնտեսությունը կազմակերպելիս և նրա ուղղությունն ընտրելիս ամենաառաջին խնդիրն է քարշող ուժի և ինվենտարի հարկավոր քանակության հաշվի առնելը: Տնտեսության մեջ ավելորդ ինվենտարը անպետք բեռն է տնտեսության հա-

մար և թանգացնում է արտադրությունը: Իսկ մեքենաների պակասությունը չի ապահովում նիշած արտադրական պլանի իրագործումը:

Կոլխոզի հիմնական առավելությունը անհատական տնտեսության հանդեպ կախնում է նրանում, վոր կոլխոզը կարող է լրիվ նագրողկայով ոգտագործել քարշող ուժը և գյուղատնտեսական ինվենտարը և ավելի կատարյալ և խոշոր մեքենաներ գործադրել: Այդպես, որինակ, գյուղացիական տնտեսությունների մեջ մի ձիուն հասնող ցանքսը միջին թվով հավասար է 3 հեկտարի, իսկ կոլխոզներում 7—10 հեկտարի. այսինքն՝ համարյա 3—3½ անգամ ավելի:

Միջին հաշվով կենդանի քարշող ուժի կարիքը կարելի է այսպես հաշվել՝ մի ձի 10 հեկտարի համար: Յեթե կոլխոզի մեջ 300 հեկտար ցանքս կա, ապա նրան հարկավոր է 30 բանող ձի, առանց հաշվելու տնտեսության ուրիշ ճյուղերի համար ծառայող ձիերը: Ընդունված է, վոր 4 յեղի աշխատանքը հավասար է 3 ձիու աշխատանքի, իսկ մեկ տրակտորը փոխարինում է 12 ձիու:

Ձիերի (կամ յեղների) հարկավոր քանակությունը կարող է փոփոխվել նալած կուլտուրաների բնույթին, այս կամ այն գ.ա.տ. բարդ մեքենաների ներկայությունը, գետնի ամրությունը և այլն:

Կոլխոզների առաջ շնորհիվ տրակտորների և բարդ գ.~տ. մեքենաների պակասություն հետևյալ խնդիրն է կանգնած.—առտագրություն համար ամենալիակատար կերպով ոգտագործել գոյություն ունեցող կենդանի ինվենտարը և գյուղացու հասարակ ինվենտարը (ձիա-մեքենական կայան)։

Կոլխոզի համար անհրաժեշտ գ.~տ. մեքենաների քանակությունը մոտավորապես կարելի է վորոշել հետևյալ չափով.—մեկ միձխանի գութան 7,5 հեկտար հերկի համար, յերկուձիանի—14 հեկտարի համար. մի ցանիչը—40 հեկտարի, մի հասարակ կալսիչ—35 հեկտարի, մի բարդ կալսիչ—75 հեկտ, մի տրակտոր—150—200 հեկտար հերկի համար։

Յեթե կոլխոզի մեջ կա 800 հեկտ. հերկ, ապա նա պետք է ունենա—107 միձխանի (կամ 57 յերկուձիանի) գութան, 20 ցանիչ, 20 հնձիչ 6 բարդ կալսիչ, 11 (կամ 23) հասարակ կալսիչ։ Անհրաժեշտ է լավ մտածել թե ինչ մեքենաներ և ինչ ինվենտար պետք է ունենալ տնտեսության մեջ, վորպեսզի բոլոր աշխատանքները կատարել—գաշտերի մշակումը, բերքի հավաքելը և այլն։ Պետք է հետևել, վոր այնպիսի մեքենաներ և գործիքներ չընտրեն, վորոնք համապատասխան չեն կամ տեղական կլիմայի և տափերի համար

անպետք են՝ շնորհիվ տնտեսություն հափերի և ուրիշ պատճառների։

Կարող է պատահել, վոր այս կամ այն կոլխոզը հնձիչ, բարդ կալսիչ գնելով՝ հնարավորություն չի ունենա նրանց լիովին ոգտագործել տնտեսության մեջ։ Դա վոչ միայն ֆևաս կհասցնի, այլև կարող է կորստաբեր հետևանքներ ունենալ տնտեսության համար։

Յեթե մի մեքենա կամ ինվենտար լիովին չի կարելի ոգտագործել, ավելի լավ է չգնել այդ մեքենան և ոգտվել քրեհով տվող կայանից։ Որինակ, չի կարելի 20—30 հեկտարի համար տրակտոր և կամ հնձիչ-խուրձկապիչ գնել 5—10 հեկտար ցանքսի համար։

ՄԹԵՐԱՏՈՒ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Վորոշելու համար թե ինչ քանակությամբ մթերատու անասուններ կարող է պահել մի կոլխոզ, վոր իր հիմնական մասնաճյուղ է ընտրել հացաբույսերը, անհրաժեշտ է այն ընդհանուր քանակությունից, վոր պետք է հավաքվի ներկա տարում, ցանե այն քանակությունը, վոր անհրաժեշտ է բանող անասունները կերակրելու համար։

Յենթադրենք, վոր կոլխոզի մեջ, բանող անասուններին բավարարելուց հետո, հետևյալ մնացորդները կան, 500 ցենտներ խոտ, 300 ցենտներ

հարդ, 400 ցենտներ կարտոֆել, 300 ցենտներ կերի ճակնդեղ, 800 ցենտներ կարտոֆելի թփեր, 20 ցենտներ վարսակ: Այդ բոլոր կերը հաշվետվութան համար պետք է վերածել լավ խոտի ցենտներին, կստացվի մոտ 1500 ցենտներ խոտ:

400 կիլոգրամ քաշ ունեցող մի գլուխ մթերատու անասունի որական կերի չափը 10 կիլո խոտ հաշվելով և ի նկատի ունենալով մի տարվա ընթացքում 200 կերի որ, կստանանք $10 \times 200 = 2000$ կիլո կամ 20 ցենտներ մի գլխի համար տարվա ընթացքում, 1500 բաժանելով 20-ի, կստանանք 75: Ահա այդ է մթերատու անասունների թիվը, վոր կոլխոզը կարող է պահել իր կերի պաշարի համեմատ:

Կարող է նաև ուրիշ դրուժյուն լինել, չերը տընտեսություն հիմնական մասնաճյուղը կազմում է մթերատու անասնաբուծությունը: Յենթադրենք, վոր վորոշված է կաթնատնտեսություն կազմակերպել՝ 500 գլուխ խոշոր չեղջուրավոր անասուններից բաղկացած: Նրանց սնելու համար մի տարվա ընթացքում, մինչև գարունը հարկավոր է. ա) կոշտ կեր (հարդ, խոտ և այլն) 14 ցենտներ յուրաքանչյուր գլխին (տարվա ընթացքում 200 որ հաշվելով) ընդամենը $14 \times 500 = 7000$ ցենտներ: Յեթե ունեցած մարգերից և հացաբույսերի կուլտուրաներից հավաքվում է ընդամենը 4000

ցենտներ, ապա պակասորդ 3000 ցենտները պետք է ստացվի խոտի ցանքսից, վոր պետք է ցանել 120 հեկտար:

բ) Այդ քանակությամբ անասունների համար հարկավոր կլինի 250 հեկտար արոտատեղի, չերկու գլխի համար մի հեկտար հաշվելով:

գ) Հյուսիսային կեր (արմատապտուղներ և այլն) ձմեռը կհարկավորվի 14 ցենտներ մի գլխի համար, ընդամենը 7000 ցենտներ: Յեթե ճակնդեղի ցանքսը տալիս է 5600 ցենտներ, ապա պակասորդ 1400 ցենտները ստանալու համար պետք է ցանել դարձյալ 11 հեկտար ճակնդեղ:

Յեթե այդ բոլոր պակասորդ ցանքսի համար հողը հերիք չի անում, հարկավոր է համապատասխան չափով կրճատել նիշած հոտի չափը:

Անասնաբուծությունը կազմակերպելիս՝ ղա կոլխոզի տնտեսությունը կազմակերպելիս՝ կլանելով կոշտ կերը և նպաստելով աշխատանքի կանոնավոր կազմակերպման (յեթե հողագործությունը շատ աշխատանք է պահանջում ամառը, թյունը շատ աշխատանք է պահանջում ամառը, անասնաբուծությունը ավելի չե պահանջում ձմեռը):

Կուլակցությունը և կառավարությունը անասնաբուծություն հարցը մոտակա տարիների ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկն են համարում: Ազգաբնակչության սննդի հիմնական

պրողուկտները (միս, կաթ, ձու և այլն) արդյունաբերության համար հումուլթ (բուրդ, կաշի և այլն), արտասահման ուղարկելու համար արժեքավոր ապրանքներ (յուղ, կարակուլ և այլն), ոժանդակ մնացորդներ (աղիքներ, չեղջյուրներ, սմբակներ, խոզի մազ և այլն)—այդ բոլորը տալիս և անասնաբուծությունը:

Մինչև վերջին ժամանակ նրա զարգացմանը բավականաչափ ուշադրություն չէր դարձվում, նա կամ՝ չերկրագործության ոժանդակ զբաղմունք էր և կամ՝ իբրև հիմնական մասնաճյուղ՝ չափազանց վատ էր տարվում: Ուստի և նրա շահավետությունը շատ նվազ էր—10—8 ցենտներ կաթ և մեկ ցենտներ միս, փոխանակ նորմալ 40—50 ցենտներ կաթի և 8—10 ցենտներ մսի: Այդ տեսակ չերևույթ ալլևա անհանդուրժելի չէ: Անասնաբուծության վրա, վորպես տնտեսության ամենաշավահետ ճյուղերից մեկը, պետք է ամենալուրջ ուշադրություն դարձնել:

Հիմնական հարցը ամառվա և ձմեռվա ընթացքում կերի բազայի կազմակերպումն է: Առանց լավ կերի մթերատու անասնաբուծություն չի կարելի ունենալ:

Անասունին պետք է տալ կոշտ, հյութալից և ուժեղ կեր: Ուժեղ կեր է—հացահատիկ, արմատապտուղներ, քուսպ և այլն:

Կոշտ կեր (ավելի ստույգ չափով քան վերև հիշածը) պետք է տալ անասնի կենդանի քաշի համապատասխան հաշվով: Միջին թվով տարվա ընթացքում պետք է տալ անասնի քաշից 7 անգամ ավելի կեր: Յեթն կովի քաշը չերկու ցենտներ է, տարվա ընթացքում նրան պետք է տալ 14 ցենտներ կոշտ կեր: Հյութալից կեր անասունը ստանում է ամառն արոտատեղերում (չերկու չեզին հարկավոր է 1 հեկտար, իսկ ամեն մի ձիուն բացի մսուրի կերից—¹/₄ հեկտար: Ձմեռը 2 ցենտներ քաշ ունեցող անասնին հարկավոր է 14—15 հեկտար հյութալից կեր՝ նրա կենդանի քաշի ¹/₃₀ մասը՝ 200 որվա համար:

Առաջին (աշնանային) 100 որը անասունները սնվում են թարմ հյութալից կերով, իսկ մնացած (ձմեռային) 100 որերը սիլոսային կերով:

Ուժեղ կերը տարբեր տեսակ անասունների համար տարբեր քանակությամբ է հարկավոր: Կարելի չէ խորհուրդ տալ ոգտագործել նաև լոբու բույսեր, և զործադրել սոյաչի ցանքսը, վոր հեկտարին տալիս է 20—30 ցենտներ և շատ սննդարար է: Անասնաբուծական ուղղություն ունեցող կոլխոզներին խորհուրդ կարելի չէ տալ բացի դաշտային ցանքսափոխությունից, գործադրել նաև՝ ագարակին կից կերի ցանքսափոխություն, ուր կարելի չէ մշակել կերի խոտեր և արմատապտուղներ:

Պետք է լավ հիշել, Վոր անասնաբուծութիւն և առհասարակ ամբողջ տնտեսութիւն արդշունավետութիւն համար անհրաժեշտ պայման է կազմում անասուններին նորմալ սնելը:

Խոշոր չեղջուրավոր անասուններին գերացումն:—Խոշոր չեղջուրավոր անասուններին գերացումն իբրև անասնաբուծութիւն ձեռնից մեկը, չերկու տեսակի չե լինում—բրակ համարված և բանեցնելու համար անպետք անասունների (մեծ մասամբ չեղների) գերացումն, և ջահել անասուններից մասցու պատրաստելը:

Յեղների և բրակ համարված կովերի գերացումը կարելի չե աչապես կատարել, Վոր մեծ ոգուտ տա աչն կոխողներում, ուր կոշտ կերի, քուսպի և աչն մեծ պաշարներ կան: Մեծ մասամբ անասուններ տալիս են միս պատրաստող կազմակերպութիւնները, Վորոնք Վորոշ պայմաններով վճարում են դրա համար: Գերացումը տեւում է 2—5 ամիս՝ նաչած անասնի դրութիւնը: Յեթե կոխողը իր ջահել տավարը գերացնի ու աճեցնի, աչգ գործը կանոնավոր կերպով և խոշոր չափով կազմակերպի, դա մեծ դեր կխաղա մսի արտադրութիւն մեջ և միանգամայն արդշունավետ կլինի: Այդպիսի ջահել տավարը աճեցնելիս, պետք է ընտրել նաև կովեր՝ Վոշ պակաս քան

50 տոկոս, գերացման համար գործադրելով սեպարատորով անցած կաթը և աչն:

Կաթնաչին անասնաբուծութիւն:—Կաթնաչին անասնաբուծութիւնը, Վոր հիմնված է յուղի ու պանրի վաճառքի վրա, տալիս է աչնքան պրոդուկցիա, Վոր մի գլուխ անասնին ընկնում է տարեկան ավելի քան 800 ռուբլու: Արդշունավետութիւնն ավելացնելու համար կոխողը պետք է լավացնի և լայնացնի իր հոտը, ձեռք բերի աչնվացեղ ցուլեր: Ռուսական ցեղի անասունները մի շարք առավելութիւններ ունեն քան արտասահմանյանը. ռուսականը եժան է, Վոշ պակաս արդշունավետ, ավելի հարմարված են մեր կլիմային, տալիս է ավելի թանձր և յուղալի կաթ: Հոտը շարունակ բազմացնելու և բրակ արված կովերի փոխարեն ուիշներն ունենալու համար (բրակ են արվում 10 տարուց հետո) անհրաժեշտ է ամեն մի 100 կովին ամեն տարի աճեցնել 10-15 երինջ, 100 կովի համար պետք է պահել 3 ցուլ, տարբեր հասակի ցուլիկներ (մոզիներ):

Խոզաբուծութիւն: Խոզը ամենակեր, անպահանջկոտ և շուտ աճող անասուն լինելով, չափազանց արդշունավետ է տնտեսութիւն համար: Նա կերակրվում է ամեն տեսակ ֆացորդներով, ամենահարմար կերը—չեփած (նուչն իսկ ցուրտը



տարած) կարտոֆեն եւ խոզարուծության կազմակերպման համար մեծ նշանակություն ունի ցեղի ընտրությունը, որինակ մեկ կիլո միս ավելացնելու համար հասարակ խողին հարկաւոր ե հացեղեն կեր 11 կիլո, իսկ զտարյունին՝ 5 կիլո: Դա ապացույց ե, վոր ավելի ձեռնտու չե բազմացնել ու գերացնել զտարյուն խողեր, վորոնց միսը ավելի թանգ ե գնահատվում:

Խողերի արագ բազմանալու ե հասունանալու շնորհիվ, ցեղի լավացման շնորհիվ, այդ գործը շատ շուտ արդյունավետ ե դառնում:

Ցեղային խողաբուծության նպատակն ե ուրիշ տնտեսությունների համար զտարյուն գոջիներ մատակարարել ե սովորաբար հարմարեցվում ե կաթնային տնտեսության: Ցեթե մի տնտեսության մեջ 100 կաթնատու կով կա, ապահովված ե նաև 160-200 գոջինների աճումը, վորից 20-25-ը եգեր: Այդ քանակութամբ զտարյուն եգերի համար հարկավոր ե մեկ արու: Ամեն մի եգ խողից տարեկան ընդհանուր չեկամուտը 140-150 ուտելի չե. 10-ից—չերկու տարվա ընթացքում, յեթե գոջիները պահպանվեն, խողերի թիվը կհասնի 300—325-ի: Զտարյուն խողերը հոտում պահվում են մինչև 3-4 տարեկան հասակը, վորից հետո բրակ են համարվում ե ոգտագործվում են վորպես մսացու (նրանց գերացնելուց հետո): Գերացնելուց

հետո նրանց քաշը հասնում ե 80—100 կիլոյի: Ամենալավ կերը—գարի, հաճար, կարտոֆել, արմատապտուղներ ե կաթնային մնացորդներն են:

Վոչխարաբուծություն: Վոչխարաբուծությունը զարգանում ե մասնավորապես տափաստանային շրջաններում, վորտեղ բնական արոտատեղեր կան, ե շատ թույլ ե զարգացած չերկրագործական շրջաններում: Ուստի ե վոչխարաբուծության զարգացման համար անհրաժեշտ ե տափաստանային, քոչող ե կիսաքոչող շրջաններում ձմեռվա համար կեր պատրաստել, իսկ չերկրագործական շրջաններում ցանքսափոխության մեջ խոտի ցանքս մտցնել:

Բացի անասնաբուծություն վերոհիշյալ տեսակներից չափազանց արդյունավետ ե հավաքուծությունը ե ճագարաբուծությունը: Ցեղային ճագարների եզը տարին 100 ուտելի ոգուտ ե տալիս: Ցեթե հաշվի առնենք, վոր 10 եգ ճագարները չերկու տարվա ընթացքում դառնում են 1000, ե վոր ճագարի մորթին (միսը չհաշված) գնահատվում ե հատը 5 ուտելի—բոլորովին պարզ կլինի, վոր ճագարաբուծությունը տնտեսության վերին աստիճանի արդյունավետ ճյուղ ե:

Խոշոր հավաքուծությունը, հիմնված ե ինկուբատորների գործադրման վրա (արհեստական կեր-

պով ճուտեր հանելու համար), մեծ արդշունք և տալիս և խոշոր կոլխոզներէ մեջ պետք է խոր արմատներ գցի:

ԱՄԲՈՂՁ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՁՆԵԼ ՀՈՂԱ-ԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ, ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ՆՐԱ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՃՅՈՒՂԻՆ

Մակաչն ամենից առաջ յուրաքանչյուր կոլխոզ իր ուշադրութիւնը պետք է դարձնի հողագործութիւնը պլանավորելու և կանոնավոր կազմակերպելու վրա, և գլխավորապէս ու ամենից առաջ հացահատիկային արտադրութեան լաչն զարգացման վրա: Վերև ասածներից պարզ է, թէ կոլխոզային տնտեսութեան մեջ ինչ մեծ նշանակութիւն ունի հողագործական ճշուղը: Թէ անասնաբուծութեան զարգացման համար, թէ հում նյութեր վերամշակող արդշունաբերութեան համար, թէ կոլխոզի անդամների և քաղաքների բնակչութեան համար—անհրաժեշտ է հացահատիկ, խոտ, հարդ, կրուպաներ և այլն:

Թէ ինչ կուտուրաներ պետք է ցանել—դա կախված է կոլխոզի տիպից: Յեթե տնտեսութիւնը հացահատիկային է, պարզ է վոր գլխավորապէս ցանում են հացաբույսեր: Անասնաբուծական տնտեսութեան մեջ առանձին ուշադրութիւն պետք է դարձնել արմատապտուղների և

կերի խոտերի զարգացման վրա, մասնավորապէս տեխնիկական կուտուրաներով զբաղվող տնտեսութեան մեջ գլխավոր ուշադրութիւնը պետք է դարձնել կտավատի, բամբակի, կանեփի, շաքարի ճակնդեղի և այլն ցանքսերի վրա:

Այս կամ այն կուտուրայի ցանկացած չափը վորոշվում է տնտեսութեան տիպով:

Յենթադրենք, վոր կոլխոզը, մանրամաս կերպով ուսումնասիրելուց հետո, ընտրում է տնտեսութեան նոր տիպ: Հարց է ծագում— թէ ինչ կուտուրաներ և ինչ հերթով պետք է ցանել:

Դրա համար պետք է վորոշել ցանքսափոխութիւնը:

Հաշվելով թէ վորքան և ինչ պետք է ցանել, վճռվում է և հերթավորման կարգը: Բանը նրանում է, վոր չի կարելի միեւնոյն տեղում մի քանի տարի շարունակ միեւնոյն կուտուրան ցանել, վորովհետեւ դրա շնորհիվ նվազում է բերքը: Բացի դրանից ամեն մի կուտուրա լավ նախորդ չի հանդիսանում: Որինակ, կտավատից հետո ավելի լավ է գարի ցանել քան կորեկ. արմատապտուղներից հետո — ամենաարժեքավոր կուտուրաներ. կտավատից հետո ամենակին չի կարելի աշնանացան խոտեր ցանել, վորովհետեւ ուշ են հավաքվում:

Յանքսափոխությունը պետք է համապատասխանի տնտեսութեան տրիպին, տնտեսութեան ապահովի անհրաժեշտ կերով, պետք է նախատեսենք կուլտուրայի աշխարհի հերթավորում, վոր ապահովում է բերքը և հողի պարարտութեան վերականգնումը: Կուլտուրաների փոխադարձ հարաբերութեանը պետք է նպաստի աշխատանքի պրոդուկտիվ ոգտագործման: Յանքսափոխութեանը ձեռնտու յե աշն դեպքում, յերբ գործադրվում է տարբեր ժամանակ ցանվող, խնամվող և հավաքվող զանազան բույսերի ցանքսը: Պետք է նկատի առնել նաև տեխնիկական պայմանները—բույսերի հասունանալու և հնձի ժամանակը, պարարտանյութեր մտցնելու ժամանակը, հողի հասունութեանը և այլն: Վորեն սխալից խուսափելու համար ցանքսափոխութեանը պետք է վորոշել ագրոնոմի մասնակցութեամբ:

Այնուհետև անհրաժեշտ է վորոշել, թե քանի դաշտ պետք է լինի ցանքսափոխութեան մեջ. պետք է հաշվի առնել, վոր ինչքան ավել է դաշտերի թիվը, այնքան ավելի շատ է հողագործութեան արդունքը: Յանքսափոխութեանը պահում հաստատելուց հետո պետք է իրականացնել այն, այսինքն դաշտը բաժանել այնքան հատվածների, վորքան դաշտեր են հիշված ցանքսափոխութեան մեջ: Յեթե կոլխոզը վորոշել է

ութդաշտյան ցանքսափոխութեան, ապա դաշտը բաժանվում է ութը հավասար հատվածների: Վերջապես պետք է մտածել և տնտեսութեան յերկրորդական ձուլերի մասին—այգեգործութեան և բանջարաբուծութեան մասին և նույնպես նախատեսել պահում:

Պ Ա Ր Ա Ր Տ Ա Յ Ո Ւ Մ Ը

Ինչ տեսակ ցանքսափոխութեան և ինչքան էլ լավ հող լինի—միևնույն է, ժամանակի ընթացքում նրա բերրիութեանը նվազում է: Բույսերն ամեն տարի խլում են հողից սննդարար նյութերը (ազոտ, ֆոսֆոր, կալիւ և այլն): Այդ սննդարար նյութերն այս կամ այն ձևով պետք է վերադարձվեն հողին և այդպիսով հարատեւել և նույնիսկ բարձրացնել նրա պտղաբերութեանը (բերրիութեանը): Վորոշ բույսեր հողից խլում են զանազան սննդարար նյութեր և զանազան քանակութեամբ: Իսկ ուրիշ բույսերն, ընդհակառակն, ընդունակ են ակապարելու հողում այդ նույն սննդարար նյութերը,—որինակ, առվույտը, ասպատը, սիսեռը, լոբին, վոսպը և այլն, այսպես կոչված լոբու բույսեր, հողի մեջ ազոտ են ակապարում իրենց արմատներով և այլն:

Գիտությունը ձիշտ վորոշել է, թե ինչ բույս ինչքան սննդարար նույթ է առնում հողից և ինչ բույս ինչքան է թողնում:

Ուստի և տնտեսությունը ուղիղ վարելու համար պետք է հաշվել թե ցանաքափոխության բոլոր կուլտուրաները միասին ինչքան սննդարար նյութեր են առնում հողից և ինչքան են թողնում աչնտեղ իրենց արմատներով: Դրա շնորհիվ կարելի չէ վորոշել, թե ինչքան և ինչ նյութեր պետք է մտցնել հողի մեջ իրրև պարարտացում:

Ամենալավ պարարտանյութ համարվում է գոմաղբը, վորովհետև նա պարունակում է բոլոր կարևոր սննդանյութերը: Ցանքափոխության ընթացքում մի հեկտարի համար անհրաժեշտ է 250—400 ցենտներ գոմաղբ: Հատուկ արժեք է ներկայացնում գոմաղբային հեղուկը, վոր պետք է առանձնապես պահպանել, գոմաղբը հավաքելով մի հորի մեջ, վորի պատերը աղյուսից են կամ կավով են ավաղված: Վատ պահելու շնորհիվ գոմաղբը կորցնում է սննդանյութերի մեծ մասը:

Կոլխոզի հաջի ցանքսը, բանջարաբուծությունն ու այգեգործությունը անհրաժեշտ քանակությամբ գոմաղբով ապահովելու համար, պետք է հաշվել, թե տնտեսութ. մեջ ինչքան աղբ է լինելու:

Մի տարվա ընթացքում ձին և կովը տալիս են 72-ական ցենտներ գոմաղբ, խոզը մոտ 10 ցենտներ, վոշխարը—9 ցենտներ: Այդ քանակությունները բազմապատկվում են տնտեսության մեջ գտնվող անասունների թվով: Յեթե տնտեսության մեջ կա 100 ձի, նրանք տալու չեն $72 \times 100 = 7200$ ցենտներ. 50 կով— $72 \times 50 = 3600$ ցենտներ, 20 խոզ— $10 \times 20 = 200$ ցենտներ, 45 վոշխար— $9 \times 45 = 405$ ցենտներ—կոլխոզն ընդամենը ունենալու չէ 11.405 ցենտներ գոմաղբ:

Այնուհետև հաշվում են թե տնտեսության այս կամ այն հողի համար վորքան գոմաղբ է հարկավորվելու և քանի տարուց հետո: Յենթադրենք, վոր ներկա տարում աղբով ծածկելու վարելահողի ընդհանուր մակարդակը հավասար է 100 հեկտարի: Միջին թվով հաշվելով, վոր մեկ հեկտարի համար հարկավոր է 200 ցենտներ գոմաղբ, ընդամենը հարկավորվելու չէ 20,000 ցենտներ գոմաղբ: Հետևաբար պակասում է 8595 ցենտներ, վոր պետք է փոխարինել արհեստական պարարտացումով կամ ծալրազույն դեպքում, չեթե անհնարին է այդ ստանալ—պակասեցնել մեկ հեկտարի աղբով ծածկելու նորման: Դա, իհարկե, ամենևին ցանկալի չէ, վորովհետև դա նվազեցնելու չէ բերրիությունը:

Ամենից հաճախ հողը վոչ թե լիակատար պարարտացման կարիք ե դգում, այլ միայն վորեւ մի մասի, որինակ—կալիի, ադոտի և այլն: Այդ պիսի դեպքերում չափազանց ձեռնտու չե հանք աչին պարարտացումն, վոր խիստ բարձրացնում ե դաշտերի բերրիութիւնն ու արդյունավետութիւնը: Այդ պարարտանյութերը գործադրելու վրա պետք ե հատուկ ուշադրութիւն դարձնել:

Այնուհետև պետք ե վորոշել այն պայմանները, վորոնցով կոլխոզի անդամները պետք ե գոմադրը դաշտ դուրս բերեն, վորոշ գին հաստատելով մի սալլի կամ կուլտի համար:

Պարարտացման բոլոր հարցերը մշակելուց հետո պլանում ցույց ե տրվում ամեն մի անասնի և բոլոր հոտի գոմադրի քանակութիւնը ցենտների կամ կիլոգրամի հաշվով. վորոշվում են այն կոլտուրաները, վորոնց համար անհրաժեշտ ե պարարտացումն ու դրա համար հաբկավոր գոմադրի և հանքաչին պարարտանյութերի քանակութիւնը, նաև պարարտանյութերի դաշտ հանելու ժամանակը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆՈՂ ՈՒԺԸ

Ամեն մի կոլխոզ ուշադրութեամբ պետք ե հաշվի մարդկային բանող ուժի քանակութիւնը: Յեւ

պետք ե նկատի ունենալ, վոր գործը կատարվի սեփական ուժերով, առանց վարձու աշխատանքի: Վարձել կարելի չե լոկ մասնագետներին, չեթե կոլխոզի անդամների թվում այդպիսիներ չկան: Յեթե կոլխոզի մեջ ավելորդ բանվոր ուժ կա, ապա պետք ե այնպիսի ցանքսափոխութիւն ընտրել, վորի մեջ ինտենսիվ կոլտուրաներ կան, այսինքն այնպիսի բույսեր, վորոնց խնամքն ու հավաքումը շատ աշխատանք են պահանջում և վորոնք ամենաշատ արդյունք են տալիս տնտեսութեանը—կտավատ, կանեփ, կարտոֆել, արևածաղիկ, շաքարի ճակնդեղ, բախչաներ և այլն: Յեթե բանվոր ուժի պակասութիւն կա, այդ դեպքում տնտեսութիւնը պետք ե ընտրի խոտերի ցանքսափոխութիւն, այսինքն՝ կերի բազմամյա խոտերի ցանքսափոխութիւն (առվույտ, ասպստ և այլն), վորոնց համար պահանջվող բանվոր ուժի քանակութիւնը շատ ավելի սակավ ե, քան ցանքսափոխութեան այլ կարգի դեպքում:

Բանվոր ուժի ճշգրիտ հաշիվն ապահովում ե արտադրական պլանի նախատեսած բոլոր աշխատանքների լիակատար և իր ժամանակի կատարումը: Սխալ հաշիվը չափազանց դժվար կացութեան մեջ ե դնում տնտեսութիւնը: Ուստի և շատ կարևոր ե մարդկային բանվոր ուժի հաշ-

վելու վրա ամենալուրջ ուշադրութիւն դարձնել:

Մոտավոր հաշվով կարելի չե ընդունել, վոր 6—7 հեկտարի համար հարկավոր ե մեկ մշտական բանվոր: Ավելի ճշգրիտ հաշիվ պետք ե կատարել առանձին ճշուդերի համար (հաղագործութիւն, անասնարուծութիւն և այլն), նաև ամեն մի մասնաճյուղի առանձին աշխատանքների համար: Դրանից հետո կազմվելու չե մարդկային բանվոր ուժի ընդհանուր պահանջը բոլոր տնտեսութեան համար: Որինակ, անասնարուծութեան մեջ հետևյալ նորմայով կարելի չե հաշվել.— 10 ձիուն հարկավոր ե մի ձիապահ, 9 կովին—մի կթող կին, 30 կովին—մի անասնապահ, 50—60 գլուխ խոշոր չեղջուրավոր անասունների համար—մի հովիվ, 30 խոզին—մի բանավոր և այլն:

ՈՒՍՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսութեան արդյունավետութիւնը բարձրացնելու համար և ավելորդ բանվոր ուժը զբաղեցնելու համար կոլխոզը կարող ե կողմնակի ձեռնարկութիւններ կազմակերպել (կրախմակի գործ, յուղագործութիւն, պանրագործութիւն, գինեգործութիւն և այլն). սակայն զրանք կազմակերպելիս պետք ե լավ հիշել, վոր ձեռնարկութեան ծավալն ու առհասարակ նպատակահար-

մարութիւնը պետք ե համաձայնեցրած լինի ունեցած հում նյութերին քանակութեան հետ: Այլ կերպ կոլխոզը այդ ձեռնարկութիւնները կազմակերպելիս պարտքի տակ կընկնի, հում նյութերն չի լինելու կամ սակավ ե լինելու, և այդ դեպքում ամբողջ գործը կարող ե մեծ ֆեասնելով վերջանալ:

Որինակ, կոլխոզը կազմակերպում ե յուղագործարան, տարեկան 8000 կիլոգրամ յուղ արտադրելու հաշվով. մինչդեռ կաթնատու կովերի թիվը (հանրայնացրած և անդամների սեփական) կարող ե միայն այդ քանակութեան կեսը ապահովել: Պարզ ե, վոր մի կիւտ յուղի արտադրութեան սեփական արժեքը, շնորհիվ ձեռնարկութեան թերի աշխատանքի, այնպես բարձր կլինի, վոր պրոդուկցիան մեծ ֆեասով միայն կարելի կլինի ռեսուրսներից չենթարկել (վաճառել): Տասնյակ նման որինակներ կարող են լինել: Ուստի և նախքան կողմնակի ձեռնարկութիւններ կազմակերպելը, անհրաժեշտ ե դիմել համապատասխան պետական մթերող մարմիններին և մասնագետներին: Բացի այդ՝ նման ձեռնարկութիւնների գլխին պետք ե անպատճառ մասնագետ դնել:

III ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԵԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Նախընթաց գլխում մենք տասցինք, թե կոլխոզի մեջ ինչպես պետք է արտադրությունը կազմակերպել. այդ հիմնական գործնական սովյալների հիման վրա անհրաժեշտ է կազմել կոնկրետ արտադրական պլան:

Վորպեսզի ավելի շոշափելի կերպով ներկայացնել նրա կազմելու ձևն ու միջոցը, մենք տալիս ենք պլանի մշակման յերկու մոտավոր վարիանտ, ուր սերմերի, բանվոր ուժի, բանող անասունների, ինվենտարի և այլն պահանջները վորոշելու համար գործածվել են վերև բերած մոտավոր հաշիվները:

Պլանի յերկու վարիանտ—հացահատիկային և անասնաբուծական կոլխոզի—առել ենք նրա համար, վոր շնորհիվ ցանքսափոխություն կուտուրանների չափազանց բազմազանություն, հողագործության և բանող ու մթերատու անասնաբուծության միջև, հացահատիկային և անասնաբուծական կոլխոզի միջև արտադրության

կազմակերպման իմաստով հյական տարբերություն կա:

Առաջին դեպքում արտադրություն և տնտեսություն բոլոր ճյուղերը յենթարկված են հացահատիկային տնտեսության շահերին, և հանդիսանում են վորպես նրա ոժանդակ ճյուղեր, իսկ յերկրորդ դեպքում—յենթարկվում են մթերատու (կաթնատու կամ մսացու) անասնաբուծության շահերին:

Ինչպես յերևում է այդ յերկու պլանից հացահատիկային կոլխոզը տարբեր կուտուրանների ալլ հարաբերություն և ապրանքային պրոդուկցիայի ալլ բնույթ ունի, քան անասնաբուծական կոլխոզը:

Հաշվապահական ֆինանսական հարցերի մանրամասնությունը մենք չենք տալիս, վորպեսզի չծանրաբեռնենք սակավ պատրաստ ընթերցողին և չընդարձակենք բրոշյուրի ծավալը: Ծիշտ բալանս կազմելու, գումարների փոխանցումը պլանի յենթարկելու համար և այլն ավելի ճիշտ հաշիվների համար ձեռք բերեք ցենտրիզատի հրատարակած գրքուկը այդ մասին:

Արտադրական պլան կազմելուն մոտավորապես հետևյալ կերպով պետք է մոտենալ.

ա. կոլխոզի հիմնական ճյուղը—հացատիկային տնտեսությունն է:

1. Ընթացիկ տարում կոլխոզը ցանում և 440 հեկտար հաճար, 100 հեկտար վարսակ, 20 հեկտար հնդկացորեն, 30 հեկտ. կարտոֆել, 10 հեկտ. կերի ճակնդեղ, ընդամենը 600 հեկտար: Բացի դրանից կոլխոզն ունի 8 հեկտար բանջարանոց և 75 հեկտ. մարգագետին:

2. Յենթադրում ենք վոր ստանալու յենք.—

Հաճար	4400	ցենտ.	հացահատ.	և	14960	ցենտ.	հարդ
Վարսակ	1300	»	»	»	1700	»	»
Հնդկացորեն	200	»	»	»	520	»	»
Կարտոֆել	2460	»	»	»			
Կերի ճակնդեղ	1300	»					
Մարգախոտ	750	»					

3 Հետևյալ տարի յենթադրում ենք ցանել.—

Հաճար	450	հեկտ.	սերմաց.	պահանջն	և	600	ցենտ
Վարսակ	120	»	»	»		180	»
Հնդկացորեն	20	»	»	»		23	»
Կարտոֆել	40	»	»	»		640	»
Կերի ճակնդեղ	10	»	»	»		1,6	»
Առվույտ	5	»	»	»		0,25	»

Ընդամենը 645 հեկտ. (ցանքսի ընդարձակումն և 7,5%):

4. Կոլխոզի անդամների սննդի համար (600 ուսող) անհրաժեշտ և հաճար 1200 ցենտներ, հնդկացորեն 170 ցենտներ, կարտոֆել 300 ցենտներ:

5. 100 բանող ձիերի կերի համար անհրաժեշտ և.—վարսակ 400 ցենտներ, խոտ 600 ցենտներ, հարդ 4000 ցենտներ, հաճար 100 ցենտներ:

6. Պրոդուկցիայի ռեալիզացիան նիշված և հետևյալ չափով.—հաճար 2400 ցենտներ, վարսակ 600 ցենտ., հնդկացորեն 100 ցենտ., կարտոֆել 1000 ցենտ., խոտ 150 ցենտ., կերի ճակնդեղ 500 ցենտ., հարդ 10.000 ցենտներ:

7. Մթերատու անասունների կերի համար մնում և.—հաճար—100 ցենտ., վարսակ—120 ց., կարտոֆել—520 ց., կերի ճակնդեղ—800 ցենտ., հարդ—3000 ցենտներ:

Կերի այդ բոլոր քանակությունը կերի միավորի (չոր խոտի)—1200 ցենտներ չոր խոտի չե հավասար:

9. Այդ քանակությունից 10 տոկոս բրակ, կորուստ և այլն զեղջելով, կստանանք մթերատու անասունների կերի համար 1080 ցենտներ մնացորդ: Հաշվելով ամեն մի 400 կիլո քաշ ունեցող անասնի համար վորպես տարեկան նորմա 20 ցենտներ (200 կերի որ ընդունելով) կտեսնենք, վոր կոլխոզը կարող և 54—55 մթերատու անասուն պահել:

9. Տնտեսություն մշտական բանվոր ուժի կալիքը հավասար և՛ հացահատիկային գործի 100 բանվորի, 10 բանջարաբույծի, 10 ախոռապահի, 6 կովկթողի, 3 անասնապահի, 1 հովվի, 2 չուղագործ բանվորի, 5 մսրդ վարչական ապարատի—ընդամենը 135 մարդու:

կոլխոզի ֆնացած անդամները մասամբ գործադրվում են կոլխոզի ժամանակավոր աշխատանքների վրա, ուղարկվում են քաղաքում կամ սովխոզում աշխատելու համար և այլն:

10. Գյուղատնտեսական մեքենաների պահանջը՝ միաձի գութան—80 (կամ յերկձի—43)

ցանիչ 20

հնձիչ 20

պարզ կալսիչ 16

բարդ կալսիչ 2 և այլն:

11. Գոմաղբով ծածկվելու չե 300 հեկտար, վորի համար պահանջվում է 60.000 ցենտներ գոմաղբ: Գոմաղբ ունենալու չենք—

100 ձիուց և 55 կովից 11.160 ցենտներ

200 կովից (անհատական) 14.400 »

500 վոչխարից 4.500 »

100 խոզից 1.060 »

Ընդամենը 31.060 ցենտներ

Պակասելու չե 28.940 ցենտ., այսինքն 144,7 հեկտարի համար: Դա պետք է փոխարինել սուպերֆոսֆատով—195,4 ցենտ. (2-ական—ցենտ. 97,7 հեկտ. համար) ֆոսֆորիտային ալյուրով—250 ց. (5-ական ցենտ.—50 հեկտ. համար):

12. Քանի վոր տնտեսության մեջ գոյութիւն ունի հացարույսերի մշակութիւն, բանջարաբու-

ծութիւն, անասնաբուծութիւն, կողմնակի ձեռնարկութիւններ և վարչական ապարատ, ապա տվյալ ճշուդների արդշունավետութիւնը վորոշելու և տնտեսական պլանավորում իրագործելու համար, անհրաժեշտ է չուրաքանչյուր ճշուդի համար բալանս կազմել. (տես՝ Ցենտրիզգատի հրատարակած բրոշյուրը կոլխոզի հաշվապահութան վերաբերյալ):

Առանձին ճշուդների բալանաներից կազմվում է բոլոր տնտեսութան մեկ ընդհանուր մոտավոր բալանս: Բալանսում, յեկամտի շարքում գրվում է դաշտերից և անասնաբուծութիւնից և ուրիշ ճշուդներից տարվա ընթացքում սպասվող բերքերի գումարը շուկայի միջին գներով:

Ծախսերի շարքում գրվում են մարդկանց աշխատանքի վճարը, ձիւների աշխատանքի վճարը, ինվենտարի և շինութիւնների խնամելու ծախսը, սերմերի և պարարտանյութերի արժեքը, անասունների կերի արժեքը, պաշտելու, բժշկութեան ծախսը և այլն:

Ցեկամտի և ծախսերի տարբերութիւնը կազմելու յե ամբողջ տնտեսութեան տարեկան ոգուտը կամ փասը:

Ցենթադրենք, վոր առաջին տարին յեկամուտը կազմում է 65.000 ուղբլի, իսկ ծախսերը—70.000 ու. Նշանակում է վոր կոլխոզը առաջին տարին

Ֆնաս ե ունենալու 5,000 ռուբլի, վոր պետք ե ծածկել փոխառությունով կամ վարկով այն պայմանով, վոր չերեք տարվա ընթացքում այդ փոխառությունը կամ վարկը վերադարձվի պետության:

բ. Կոլխոզի հիմնական ճյուղը—անասնաբուծությունն է:

Մի կոլխոզ, վոր 600 հեկտար վարելահող ունի, նիշում ե 500 կաթնատու կով պահել ե խոզաբուծությամբ զբաղվել: Կաթից ստացվելու չե չուղ, խոզաբուծությունից ապրանքային միս ե ճարպ. 200 հեկտար ցանվում ե հաճար, իսկ 10 հեկտար հնդկացորեն:

Բերք սպասվում ե—հաճար—2,000 ցենտներ հացահատիկ ե 6,800 ցենտ, հարդ, հնդկացորեն—100 ցենտներ հատիկ ե 260 ց. հարդ:

2. Հաշվելով ամեն մի խոշոր չեղջուրավոր անասնի համար տարեկան 20 ցենտներ կեր, վոր իր սննդարարությամբ հավասար ե այդ քանակությամբ լավ չոր խոտի, իսկ ամեն մի խոզի համար 10-ական ցենտներ, ստանում ենք 500 կովի ե 100 խոզի համար անհրաժեշտ ընդհանուր կեր 11,000 ցենտներ չոր խոտ: Այդ քանակությոնը փոխադրելով կերի ուրիշ տեսակների, կտեսնենք վոր անհրաժեշտ ե.—

Հաճար	390 ցենտ, հատիկ	ե 3,600 ց. հարդ
Վարսակ	240 » »	670 » »
Հնդկացորենի հարդ	260 » »	250 » »
Վիկ	20 » »	
Ձանազ. խոտ	800 »	
Կերի ճակնդ.	8000 »	
Կարտոֆել	3600 »	

Այդ քանակությոնը ավելացնելով այն կերի քանակությոնը, վոր անհրաժեշտ ե կոլխոզի 100 ձիերի համար ե 600 հոգու սննդի համար, կստանանք կոլխոզի սննդի ե կերի ընդհանուր պահանջը:

Հաճար	1590 ցենտ, հացահ.	ե 7000 ց. հարդ
Վարսակ	640 » »	1800 » »
Հնդկացորեն	60 » »	260 » »
Առվույտ	700 » խոտ	
Վիկ	5 » հացահատ.	ե 200 » խոտ
Վիկի խոտ	250 »	
Կերի ճակնդեղ	8000 »	
Կարտոֆել	4000 »	

3. Այդ քանակությամբ սննդեղեն ե կեր ստանալու համար անհրաժեշտ ե ցանել (հաշվելով այդ թվում նաև գալիք տարվա ցանքսի սերմը)—

Հաճար	200 հեկտ.	Հնդկացորեն	10 հեկտ.
Առվույտ	55 »	Վիկ	25 »
Վարսակ	110 »	Ճակնդեղ	100 »
Կարտոֆել	100 »		

4. Ինվենտարի և մշտական բանվոր ուժի պահանջը հետևյալն է—

Բանվորներ	252 հոգի
Դրանցից հացաբույս, մշակ. համ. 120	»
Անասնաբուծություն	» 102 »
Ուրիշ ճյուղերի	» 25 »
Վարչություն	» 5 »

Հացաբույսերի մշակություն անհրաժեշտ ինվենտարի և գործիքների քանակությունը նույնը կմնա, կավելանա միայն բանվորների թիվը՝ շնորհիվ ավելի ինտենսիվ կուլտուրաների, և ցանքախոտերի ու արմատապտուղների լայն ծավալի:

5. Անասունների ամառվա լրացուցիչ սննդի համար անհրաժեշտ է 250 հեկտ. արոտատեղ կովերի համար, և 25 հեկտ. ձիերի համար: Ընդամենը 275 հեկտ. արոտատեղ:

6. Ի նկատի ունենալով, վոր բազմաթիվ կուլտուրաները հողում շատ սննդանյութեր են թողնում, դոմադը հարկավորվելու չե միմիայն 50.000 ցենտներ: Վորովհետև կոլխոզը անասուններից ստանալու չե 45.000 ցենտներ դոմադը, ապա պակասող 5000 ցենտները պիտի փոխարինվի հանքալիճ պարարտանյութերով, որինակ՝ 50—60 ցենտներ սուպերֆոսֆատով:

7. Սուսնաձին ճյուղերի բալանաներն ու տնտեսություն ընդհանուր բալանսը հաշվի չեն առնվում ձիշտ այնպես, ինչպես առաջին որինակում:

Ի նկատի առնելով, վոր արտադրական պլան կազմելը պատասխանատու գործ է և նրա բնույթից և հատկությունից է կախված կոլխոզի հանդուրժողունը, պլան կազմելու վրա պետք է մեծ ուշադրություն դարձնել: Պլանը պետք է կազմել այն հաշվով, վոր—ա) արտադրության բոլոր միջոցները համաձայնեցրած են լինելու և կոլխոզը խոշորացրած է լինելու, բ) ինվենտարի, գյուղատնտեսական գործիքների, բանող անասունների և մեքենաների հատկությունը լավանալու չեն. գ) կազմակերպությունը լավանալու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու չե. դ) կոլխոզի բերրիությունն ու ապրանքայնությունը մեծանալու չե. չե) ամբողջ տնտեսության արդյունավետությունն ավելանալու չե. զ) ազդելու չեն շրջակա անհատական տնտեսությունների վրա, վորպեսզի նրանց կոլեկտիվացնեն:

Տնտեսության պլանը կազմելիս պետք է մեծ ուշադրություն դարձնել գումարների բաշխման վրա, չեկամտի և ծախքի ստույգ հաշվետվության վրա: Իհարկե, միշտ այնպես չի լինելու, վոր նի-

շած չեկամտի բոլոր գումարները վորոշ ժամանակ
զանձվելու չեն կոլխոզի կասսայում: Դա պետք է
ի նկատի առնել և պլանն աջակես կազմել, վոր-
պեսզի դրամական զանձումները ավելի քան լիո-
վին գերազանցեն ծախքերը:

Հարկավոր է խնամք տանել, վորպեսզի հաշ-
վապահությունն և հաշվետվությունը
իր ժամանակին և ինչպես հարկավոր է կազմա-
կերպված լինի: Դրա շնորհիվ տնտեսությունը
կարելի կլինի հաջող կերպով և կանոնավոր վարել:

Տնտեսությունը վարել միտք ունի միայն այն
ժամանակ, չերբ նա արդյունավետ է: Կատարած
այս կամ այն ծախքի ոգտավետությունը կամ
անոգտավետությունը կարելի չե միայն այն
դեպքում իմանալ, չերբ ձեռքի տակ ունեն կա-
նոնավոր հաշվառք: Տնտեսությունը կարող է ար-
դյունք տալ, սակայն եյականն այն է, վորպեսզի
իմանան, թե վճրտեղից և այդ արդյունքը, տըն-
տեսության վճր մասնաճյուղից, վորպեսզի հե-
տագայում ավելի զարգացնել այդ արդյունավետ
մասնաճյուղը: Յեթե ընդհակառակը, ֆլաս և ստա-
ցվել, նմանապես պետք է իմանալ, թե վորտեղից է
ֆլասը ստացվել, վորպեսզի հարկավոր միջոցներ
ձեռք առնվի: Այս բոլոր տվյալները կարող են տե-
ղի ունենալ կոլխոզի մեջ, չեթե հաշվապահությունը
կանոնավոր կազմակերպված կլինի նրանում:

Յեթե հաշվապահությունը կանոնավոր տարվի,
կոլխոզը ապահովված կլինի—տեղի չեն ունենա
չարաշահություններ, վատնումներ և ալլն, տե-
ղյակ կլինի, թե վորքան վարկ է ստացել ու ինչ-
պես գործադրել նրանց, չերբ և ում է վերադար-
ձրել նրանց և ալլն:

Մինչև արտադրական պլան կազմելը կոլխոզի
աշխատանքը պետք է առաջնորդվի մոտակա
կամպանիայի վերաբերյալ հատուկ ցուցմունքնե-
րով: Ցանքսի կամպանիայի շրջանում պետք է
որացուցցալին պլան կազմել:

Պլան կազմելուց և գործադրության մտցնե-
լուց հետո, կոլխոզի վարչության, արտադրական
խորհուրդների ակտիվի, բատրակ-չքավորական
խմբակի, կուսակցականների և կոմյերիտականների
ամբողջ ուշադրությունը պետք է դարձվի պլանի
հարյուրտոկոս իրագործման վրա:

Ամենալավ պլանը, չեթե նա չի իրականա-
ցվում կամ թե իրականացվում է ի միջի ալլոց,
կոլխոզի զարգացման գործին չի նպաստելու:

Ուստի և անհրաժեշտ է վորպեսզի կոլխոզնիկ-
ները չեռանդուն և ակտիվ կերպով ձեռնարկեն
պլանի իրագործման խնդրին, պարբերաբար
քննության չենթարկեն պլանի իրագործման
ընթացքը արտադրական խորհրդակցություննե-
րում և ընհանուր ժողովներում, ամենալալն սոց-

մըցակցութիւն կազմակերպեն աշխատակիցներին
խմբերի, տնտեսութեան առանձին ճյուղերի միջև
և այլն:

Կոլխոզի ամեն մի անդամ մի անգամ ընդմիջա-
պետք ե յուրացնի, վոր տնտեսութեան բարեկե-
ցութիւնը ամբողջովին (և ամեն մի անդամինը
մասնավորապես) կախված ե նրանից, թե տըն-
տեսութեան բոլոր անդամները և ամեն մի առան-
ձին կոլխոզնիկ ինչպես են վերաբերվելու նիշած
պլանին, վորպեսզի լիովին իրականացնեն աշն,
դաշտերի բերրիութիւնը մեծացնեն, կովերի
կաթնառատութիւնը, ապրանքացնութիւնը և
հետևաբար ամբողջ տնտեսութեան արդէնավետու-
թիւնը բարձրացնեն:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ Ի

ԿԵՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԸ

(Ըստ պրոֆ. ՅՆ. ԼԻՍԿՈՒՆԻ)

Իբրև հիմք ե վերցված 410 գրամ վարսակի
սննդայնութիւնը, վոր հավասար ե 245 գրամ
ոսլալին նյութերի, վորը սննդայնութեամբ նույն-
պես հավասար ե 410 գրամ հետևյալ խառնուր-
դին—137 գրամ ցորենի թեփի, 137 գրամ վար-
սակի և 137 գրամ արեւածաղկի քուսպի:

Այդ հաշվով կերի ռուսական միավորը հա-
վասար ե.

400 գրամ վարսակի

500 » թեփի

300 » արեւածաղկի կամ վուշի քուսպի

600 » կանեփի քուսպի

2,0 կիլո ջրալի կարտոֆիլի

6,5 » կերի ճակնդեղի

2,8 » լավ կանաչ խոտի

4,0 » արմատապտուղների լավ թփերի
 1 կիլո լավ չոր խոտի
 1,2—1,6 » ճահճ. խոտի
 4,0 » ցորենի քուսպին
 1,6 » գարնանացանի հարդի
 1,4 » լավ կարտոֆելի
 4,9 ճակնդեղի թարմ քուսպի
 10,2 կարտոֆելի քուսպի

Ծանոթ.— Ցորենի քուսպը ստացվում է ցորենից արաղ քաշելուց հետո (տրորված մնացորդը), նույնը և կարտոֆելի քուսպը, իսկ ճակնդեղինը ստացվում է ճակնդեղից շաքար հանելուց հետո (տրորված մնացորդը):



Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ի

ՄԵՏՐԱԿԱՆ ՉԱՓԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ՌՈՒՍԱԿԱՆԻ
 (Գյուղական կարիքներին բավարար ճշտությամբ)

1 հեկտար (100 ար) = 1 դեսյատինի առանց
 200 քառ. սաժենի:
 1 ար (100 քառ. մետր) = 22 քառ. սաժենի.
 1 քառ. մետր = 2 քառակուսի արշինի.
 1 խորանարդ սաժեն = 10 խորանարդ-մետրի
 (ավելի ճիշտ $9\frac{3}{4}$ խոր. մետրի).
 1 կիլոմետր (1000 մետր) = 1 վերստ առանց
 31 սաժենի.
 1 մետր (100 սանտիմետր) = արշին և $6\frac{1}{2}$
 վերշոկի.
 1 տոննա (1000 կիլոգրամ) = 61 փուլի և 2
 գրվանքալի
 1 ցենտնեը (100 կիլոգրամ) = 6 փուլի և
 4 գրվանքալի.
 1 կիլոգրամ (1000 գրամ) = $2\frac{1}{2}$ գրվանքալի,
 առանց $5\frac{1}{2}$ մսխալի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

- I Պետք է կանոնավոր կազմակերպություն
և պլանավորություն մտցնել կոլխոզ-
ներում 3
- II Պլանային տնտեսության ուղիով . . . 13
- ա) Տնտեսության տիպերը 18
- բ) Հողաշինարարություն 19
- գ) Գյուղատնտեսական ինվենտարը և
քարշող ուժը 24
- դ) Մթերատու անասնաբուծություն . 27
- ե) Ամբողջ ուշադրությունը դարձնել
հողագործության կազմակերպման
վրա 36
- զ) Պարարտացումը 39
- ը) Մարդկային բանող ուժը 42
- թ) Ոժանդակ ձեռնարկությունները . 44
- III Ինչպես պետք է կազմել արտադրական
պլանը 46

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- I Կերի ոռոտական միավորը 59
- II Մետրական չափերի փոխադրումը ոռո-
տականի 61

ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՀԱՇ-
ՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶ-
ՆԵՐՈՒՄ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԶԻԱ-
ՄԵՔԵՆԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՇ-
ԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

ԳԼԽԱՊՏՈՒՅՏԸ
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՅՈՒ-
ՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԿԱԶ-
ՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԻՄ Ն Ա Կ Ա Ն
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՈՒ-
ՄԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ
ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

10 4.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ՄԸ ՑԵՎ ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ
ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

8 Կ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ
ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒՄ
ՑՈՒՆԸ

2 Կ.

ԿՈԼԽՈԶԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄ
ԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ԿՆԴԻՐՆԵՐԸ

15 Կ.

ԱԳՐԱՐԱՑԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

8 Կ.

ԿՈԼԽՈԶԱՑԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄ
ԹՅԱՆ ՈՒԴԱՐՆԻԿՆԵՐԸ

Դիմել՝ Центриздат,

ՀՀ Ազգային գրադարան



NL0193430

28354